

«Հայաստան ծառատունկ ծրագիր» բարեգործական հիմնադրամը նախատեսում է անտառատունկ Յրանտ Դինքի հիշատակին (1954-2007)

Հայազգի խմբագիր – լրագրող Յրանտ Դինքի ողբերգական մահից հետո մի խումբ բարերարներ դիմեցին «Հայաստանի ծառատունկ ծրագիր» բարեգործական հիմնադրամին՝ նրա հիշատակին հատուկ անտառ տնկելու առաջարկով:

Անցյալ շաբաթ Ստամբուլում հիմնադրված «Ագոս» երկլեզու թերթի խմբագիր Յրանտ Դինքի ողբերգական մահը ցնցեց – խորապես վշտացրեց համայն աշխարհի հայությանը՝ Ստամբուլից մինչև Գլենդեյլ: Թուրքիայում գործող 301 հոդվածով՝ «թուրքական ինքնությունը վիրավորելու համար» դատապարտված Յրանտ Դինքը, Մեծ եղեռնի մասին բացահայտ խոսելու համար ամիսներ շարունակ մահվան սպառնալիքներ էր ստանում թուրք աջակողմյան ազգայնամոլներից: Հունվարի 19-ին մի երիտասարդ իրականացրեց սպառնալիքները՝ ետ-ից մի քանի անգամ կրակելով նրա գլխին:

Սպանությունը միջազգային գայրույթի – կարեկցանքի տեղիք տվեց: Հունվարի 23-ին ավելի քան 100.000 մարդ միացավ Յրանտ Դինքի հուղարկավորությանը Թուրքիայում: Անցնելով Ստամբուլի փողոցներով, «Մենք Յրանտ ենք» ցուցանակները ձեռքներին՝ նրանք բացականչում էին. «Մենք բոլորս Յրանտ ենք, մենք բոլորս հայ ենք»: Յրանտ Դինքի վերաբերյալ մանրամասն տեղեկությունների համար այցելեք www.hrantdink.org կայքը:

Յրանտ Դինքը իր հիմնադրած թերթը անվանել է «Ագոս»: «Ակոսը սերտորեն կապակցված է ծառ տնկելու բուն ընթացքի հետ: Թերթի անվանումը ոգ-որեց նվիրատուներին սկզբնական ֆինանսավորում ապահովել՝ Յրանտ Դինքի հիշատակին անտառ տնկելու նպատակով», - ասաց «Հայաստան ծառատունկ ծրագիր» բարեգործական հիմնադրամի գործադիր հանձնաժողովի անդամ Նենսի Կրիկորյանը:

Ուղթերթաուն – Եր-ան քաղաքներում գործող շահույթ չհետապնդող «Հայաստան ծառատունկ ծրագիր» /ՅԾԾ/ բարեգործական հիմնադրամը (որի պաշտոնական անվանումն է «Էյ Թի Փի» բարեգործական հիմնադրամ) իրականացնում է կենսական նշանակություն ունեցող բնապահպանական ծրագրեր Հայաստանի աղքատացած – անտառազուրկ տարածքներում – աջակցություն է փնտրում անտառների վերականգնման առաքելությունն իրականացնելու համար:

1994 թվականից ի վեր ՅԾԾ-ն մեծ հաջողությունների է հասել վտանգված կենսաբազմազանությամբ Կովկասյան տարածաշրջանում անապատացման դեմ պայքարում: ՅԾԾ կողմից արդեն տկվել – վերականգնվել է 1.5 միլիոն ծառ, – հարյուրավոր աշխատատեղեր են բացվել հայերի համար սեզոնային ծառերի վերականգման ծրագրերում: Մանրամասն տեղեկությունների համար կամ Յրանտ Դինքի հիշատակին անտառատվերականգմանը աջակցություն ցուցաբերելու նպատակով այցելեք www.ArmeniaTree.org ինտերնետային կայքը: